ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ԳՀ-2019/1-3.3

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

ք. Երևան

14-ը փետրվարի 2019թ.
Ժամը 10^{00}

Բացողներ՝

Կոմիտեի գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ **Գ.Դավթյան**

Կոմիտեի տնտեսական բաժնի պետ **Ռ. Արշակյան**

1. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին

1.1 ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am համակարգի միջոցով 14.02.2019թ-ի ժամը 10:00-ին ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի շենքում՝ ք.Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում:

1.2 Սահմանված ժամկետում՝ (14.02.2019թ. ժամը 10:00) http://www.armeps.am էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

1.3 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են http://www.**armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ԳՀ մրցույթի ներկայացված հայտերի քանակը 8-ն է:

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության էլեկտրոնային փոստի հասցե
1	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	magistral.nakhagits@yahoo.com
2	«Ստեփրիկ» ՍՊԸ	steprik@yahoo.com
3	«Մոդուլ» ՍՊԸ	info@modul.am
4	«Պոլիգոն» ՍՊԸ	hoxashinarar@mail.ru
5	«Ինեքս» ՍՊԸ	apresyan.expert@mail.ru
6	«ԿԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ»Ա/Ձ	hakob2284@mail.ru
7	«Գեոդեզիայի և քարտեզագրության» ՊՈԱԿ	gnumnergeodezia@mail.ru
8	«Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի» Ա/Ձ	aroyerevan@mail.ru

Բացող անդամներ՝	_____	**Ռ. Արշակյան**
	_____	**Գ. Դավթյան**
Քարտուղար՝	_____	**Ա. Պետրոսյան**

15.02.2019թ-ին ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

/Հանձնաժողովի բացող անդամների կողմից հայտերի բացումն իրականացնելուց հետո հանձնաժողովը նիստը շարունակեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո/

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

Կոմիտեի նախագահի տեղակալ Ս.Աթանեսյան

գնահատողներ՝

Կոմիտեի պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սահակյան,

Կոմիտեի գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ասատրյան,

Ընթացակարգի քարտուղար՝

Կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝

Չափաբաժին 1: Հողամասերի չափագրում և հատակագծերի կազմում – **4.008.100 ՀՀ դրամ:**

2. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

2.1 Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.2 «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.3 Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

2.4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

2.5 Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

2.6 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.1 **Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
2.	«Ստեփրիկ» ՍՊԸ
3.	«Մոդուլ» ՍՊԸ
4.	«Պոլիգոն» ՍՊԸ
5.	«Ինեքս» ՍՊԸ
6.	«ԿԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ»Ա/Ձ
7.	«Գեոդեզիայի և քարտեզագրության» ՊՈԱԿ
8.	«Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.2 «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «Ինեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի N3 հավելածում և լիցենզիայում բացակայում էին մասնակցի կողմից փաստաթուղթը հաստատող էլեկտրոնային ստորագրությունը /այն արտահայտված էր միայն նկարի տեսքով/:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել ներկայացված շտկումները քննարկելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

19.02.2019թ., ժամը 17:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Ինեքս» ՍՊԸ-ի կողմից առկա անհամապատասխանությունը շտկվել է և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.3 Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

2.3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	Մասնակցի ներկայացրած գին /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	3281800	-	3281800
2.	«Ստեփրիկ» ՍՊԸ	3335600	-	3335600
3.	«Մոդուլ» ՍՊԸ	3920000	784000	4704000
4.	«Պոլիգոն» ՍՊԸ	2400000	-	2400000
5.	«Ինեքս» ՍՊԸ	3300000	-	3300000
6.	«ԿԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ» Ա/Ձ	3228000	-	3228000
7.	«Գեոդեզիայի և քարտեզագրության» ՊՈԱԿ	2690000	538000	3228000
8.	«Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի» Ա/Ձ	39500	-	39500

2.3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

2.3.3 Սույն ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 18.02.2019թ-ին գումարվել է արտահերթ նիստ /N ԳՀ-2019/1-3.2 արձանագրությամբ/, որտեղ քննարկվել է «Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված դիմումը, համաձայն որի վերջինս պարզաբանում էր, որ իր կողմից թյուրիմացաբար գնային առաջարկում ընդհանուր գումարի փոխարեն նշվել է միավորի արժեքի գումարը և դիմել էր հանձնաժողովին, որպեսզի գնային առաջարկը հաշվարկելիս ընդունվի իր կողմից ներկայացված գինը բազմապատկելով հրավերով նախատեսված ընդհանուր քանակին:

2.3.4 Հիմք ընդունելով հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետով սահմանված պահանջները՝ մասնավորապես 5.3-րդ մասով սահմանված պահանջով, առ այն, որ. «մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով արտահայտված՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա

ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ», ինչպես նաև ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը, համաձայն որի գնային առաջարկը ենթակա չէ շտկման, հանձնաժողովը որոշեց, որ «Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կընդունվի, ոչ թե որպես միավորի արժեք, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

2.4.1 **19.02.2019թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «Արարատ Սողոմոնյան Ալեքսանդրի» Ա/Ձ-ն: Մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցնող մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

2.4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.5 Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

2.5.1 «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 08.02.2019թ-ին armeps համակարգի միջոցով ներկայացվել է հրավերի պարզաբանման հարցում: Հարցումը վերաբերում էր «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հողամասերի միջին մակերեսի և քանակի հստակեցմանը:

2.5.2 «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հարցման պարզաբանման նպատակով կազմակերպված N ԳՀ-2019/1-2 նիստով արձանագրվեց, որ Ընթացակարգի հրավերին կից՝ ծառայությունների գնման պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով(ծառայությունների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) հստակ սահմանված է, որ 134.5հա-ն չափագրման ենթակա հողամասերի առավելագույն մակերեսն է, այսինքն, ծառայությունների առանձնահատկություններով պայմանավորված, պատվիրատուն գնման պայմանագիր կնքելիս փաստացի չի տիրապետում, թե հանրապետության որ տարածքում և ինչ մակերեսի շինության չափագրման կարիք կառաջանա, քանի որ չափագրման անհրաժեշտությունը որպես կանոն պայմանավորված է լինում ՀՀ կառավարության որոշմամբ տրվող հանձնարարականների, վարչապետի հանձնարարականների, գրանցում չունեցող գույքի գրանցման, գույքային բաժանման, վկայականներում գրանցված մակերեսների ճշտման, քաղաքացիների, իրավաբանական անձանց կողմից ներկայացվող դիմումների հիման վրա իրականացվելիք գործընթացներով և այլ չնախատեսված դեպքերով: ՈՒստի և վերը նշված դեպքերում փաստացի պահանջարկ առաջանալիս՝ պատվիրատուն նախատեսված առավելագույն քանակի սահմաններում պատվեր է ներկայացնում Կատարողին, որն էլ պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել պատվերի կատարումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.6 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ստորագրությունը

Նախագահ՝

---------- Ս. Աթանեսյան

Գնահատող անդամներ՝

---------- Վ. Ասատրյան

---------- Ա. Սահակյան

Քարտուղար՝

---------- Ա. Պետրոսյան